ԼՐԱՏՈՒ ХРОНИКА

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ ՇՆՈՐՀՈՒՄԸ

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետը վերջերս 1970—1971 թթ. Հայկական ՍՍՀ պետական մրցանակները շնորհեցին գիտության ու տեխնիկայի բնագավառներում իրենց կատարած աշխատանքներով առավել աչքի ընկած մի խումբ աշխատողների:

Գիտության բնագավառում պետական մրցանակի է արժանացել ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս *Ա. Ղարիբյանը*՝ «Ռուս-հայերեն բառարանը» կազմելու համար: Այդ բառարանը, որ պրոֆ. Ղարիբյանի շուրջ 15-ամյա տքնաջան աշխատանքի արդյունքն է, արտահայտում է ռուս գրական լեզվի բառային կազմը: Այն կազմելիս հեղինակն օգտագործել է վերջին հինգամյակի ռուս բառարանագրության նվաճումները: Նա ընտրել է նիշտ ու հատու օրինակներ բառերի բոլոր նշանակությունների համար, ըստ որում օրինակները առնված են ռուս գրական հեղինակային տեքստերից. այս հանգամանքը բառարանը գերծ է պահում ինքնահնար օրինակներից, մի բան, որից չեն կարողացել խուսափել նախորդ շատ բառարանագիրներ:

Հարյուրամյա ավանդույթներ ունեցող հայ բառարանագրության պատմության մեջ պրոֆ. Ղարիբյանի բառարանը պատվավոր տեղ է գրավում և, անշուշտ, նպաստելու է ռուս-հայերեն բառարանագրության զարգացմանը, երկար տարիներ սեղանի գիրք է լինելու բազմահազար այն ընթերցողների համար, ովքեր ռուսերենի միջոցով հաղորդակից են լինելու համաշխարհային գիտության ու մշակույթի գանձերին:

Գիտության բնագավառում պետական մրցանակի դափնեկիրներ են դարձել նաև կենսաբանական գիտությունների թեկնածու, ՀՍՍՀ գյուղատնտեսության մինիստրության խաղողագործության, գինեգործության և պտղաբուծության գիտահետազոտական ինստիտուտի պտղատուների սելեկցիայի և տեսակների ուսումնասիրման բաժնի վարիչ *Ս. Ագուլյանը* և գյուղատնտեսական գիտությունների թեկնածու, նույն ինստիտուտի լեռնային պտղաբուծության բաժնի վարիչ *Պ. Կարանյանը*՝ «Պտղաբուծության գիտական հիմքերի մշակումը և դրանց արմատավորումը Հայկական ՍՍՀ լեռնային բարձրադիր գոտիներում» աշխատության համար:

Տեխնիկայի բնագավառում հանրապետության այդ բարձրագույն պարգևին արժանացել են ստեղծագործական երեք կոլեկտիվներ. Արզնու «ռյուրեդ» արդյունաբերական միավորման դիրեկտոր *Ա. Հարությունյանի* և Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական կոմբինատի ֆիզիկա-քիմիական լաբորատորիայի վարիչ *Վ. Մարգսյանի* ղեկավարած կոլեկտիվի անդամները, մետաղահատ հաստոցների փորձնական գիտահետազոտական ինստիտուտի Անդրկովկասի մասնաճյուղի դիրեկտոր, տեխնիկական գիտությունների թեկնածու *Ս. Կանդայանի* ղեկավարած գիտնականների ու ինժեներատեխնիկական աշխատողների խումբը և Ս. Մ. Կիրովի անվան քիմիական կոմբինատի նախկին դիրեկտոր, սոցիալիստական աշխատանքի հերոս *Ս. Թումանյանի* ղեկավարած ինժեներատեխնիկական աշխատողների կոլեկտիվը:

Հ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ III ՊԼԵՆՈՒՄԸ

Ս. թ. փետրվարի 29-ին Երևանի արվեստի աշխատողների տանը կայացավ Հայաստանի գրողների միության վարչության երրորդ պլենումը, որը լսեց և քննարկեց վարչության առաջին քարտուղար Էդ. Թոփչյանի զեկուցումը՝ «ՍՄԿԿ Կենտրոնական կոմիտեի որոշումը գրական-գեղարվեստական քննադատության մասին և մեր խնդիրները»: ՍՄԿԿ Կենտկոմի որոշումը, ասում է զեկուցողը, նշեց, որ չնայած կատարված զգալի աշխատանքին, գրական-գեղարվեստական քննադատության ներկա վիճակը չի համապատասխանում կոմունիստական շինարարության պահանջներին: Սովետական գրականության ու արվեստի զարգացման, ազգային կուլտուրաների փոխհարստացման, մարդու գեղագիտական դաստիարակության մեծ տեղաշարժերը չեն զրա-